ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ

Օ Ր Ե Ն Ս Գ Ի Ր Ք

Ընդունված Ազգային ժողովի կողմից
1998 թվականի մայիսի 5-ին

Հոդված 1100. Մտավոր սեփականության օբյեկտները

1. Մտավոր սեփականության օբյեկտներ են մտավոր գործունեության արդյունքները և քաղաքացիական շրջանառության մասնակիցների, ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների անհատականացման միջոցները:

2. Մտավոր գործունեության արդյունքներ են՝

1) գիտության, գրականության և արվեստի ստեղծագործությունները.

2) կատարումները, հնչյունագրերը (ֆոնոգրամաները) և հեռարձակող կազմակերպությունների հաղորդումները.

3) գյուտերը, օգտակար մոդելները, արդյունաբերական նմուշները.

4) սելեկցիոն նվաճումները.

5) ինտեգրալ միկրոսխեմաների տոպոլոգիաները.

6) չբացահայտված տեղեկատվությունը՝ ներառյալ արտադրության գաղտնիքները (նոու-հաու):

7) բույսերի սորտերը:

3. Քաղաքացիական շրջանառության մասնակիցների, ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների անհատականացման միջոցներ են՝

1) ֆիրմային անվանումները.

2) ապրանքային նշանները (սպասարկման նշանները).

3) աշխարհագրական նշումները, ծագման տեղանունները և երաշխավորված ավանդական արտադրանքի անվանումները:

4. Սույն օրենսգրքով և այլ օրենքներով նախատեսված դեպքերում մտավոր սեփականության օբյեկտներ կարող են լինել մտավոր գործունեության այլ արդյունքներ և քաղաքացիական շրջանառության մասնակիցների, ապրանքների ու ծառայությունների անհատականացման այլ միջոցներ:

(1100-րդ հոդվածը խմբ. 25.09.02 ՀՕ-413-Ն, 29.04.10 ՀՕ-61-Ն)

Հոդված 1157. Բույսերի նոր սորտերի և կենդանիների նոր ցեղերի նկատմամբ իրավունքների պահպանության պայմանները

1. Բույսերի նոր սորտերի և կենդանիների նոր ցեղերի (սելեկցիոն նվաճումների) նկատմամբ իրավունքները պահպանվում են, եթե տրվել է արտոնագիր:

2. Բուսաբուծության մեջ ~~սելեկցիոն նվաճում~~ *բույսի նոր սորտ* է համարվում արհեստական ճանապարհով կամ ընտրության միջոցով ստացված և գոյություն

ունեցող բույսի սորտերից մեկ կամ մի քանի տարբերակիչ տնտեսական հատկանիշներ ունեցող բույսի սորտը:

3. Անասնաբուծության մեջ սելեկցիոն նվաճում է համարվում մարդու կողմից ստեղծված և ծննդաբանական կառուցվածքով ու այն նույն կենդանիների ցեղի կենդանիներից տարբերելու և կենդանիների մեկ ցեղի ձևով բազմանալու համար քանակապես բավարար հատկություններով օժտված կենդանիների ցեղը, այսինքն՝ ընդհանուր ծագում ունեցող կենդանիների բազմանդամ խումբը:

4. Պահանջները, որոնցով պայմանավորված է արտոնագիր ստանալու իրավունքի ծագումը և սելեկցիոն նվաճումների արտոնագիր տալու կարգը, սահմանվում են օրենքով:

5. Սելեկցիոն նվաճումների նկատմամբ իրավունքների և այդ իրավունքների պահպանության հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում են սույն օրենսգրքի 1146-1151, 1153-1156 հոդվածների կանոնները, եթե այլ բան նախատեսված չէ սույն գլխի կանոններով և «Սելեկցիոն նվաճումների պաշտպանության մասին *«Բույսի սորտերի պահպանության մասին»* Հայաստանի Հանրապետության ~~օրենքով~~ *օրենքներով*: Այդ դեպքում լիազոր մարմնի իրավունքները և պարտականություններն իրականացնում է այն պետական մարմինը, որի վրա դրված է սելեկցիոն նվաճումների փորձարկումը և պահպանությունը:

Հոդված 1158. Սելեկցիոն նվաճումն անվանակոչելու հեղինակի իրավունքը

1. Սելեկցիոն նվաճման հեղինակն իրավունք ունի որոշել դրա անվանումը, որը պետք է համապատասխանի «Սելեկցիոն նվաճումների պաշտպանության մասին *և «Բույսի սորտերի պահպանության մասին»* Հայաստանի Հանրապետության ~~օրենքով~~ *օրենքներով* սահմանված պահանջներին:

2. Պահպանվող սելեկցիոն նվաճումների արտադրության, վերարտադրության, վաճառքի նպատակով առաջարկության, վաճառքի և վաճառահանման այլ տեսակների դեպքերում սելեկցիոն նվաճումների համար գրանցված անվանումների կիրառումը պարտադիր է: Արտադրված և (կամ) վաճառվող սերմերին, տոհմային նյութին գրանցվածից տարբեր անվանում շնորհել չի թույլատրվում:

3. Գրանցված սելեկցիոն նվաճման անվանումը դրան չվերաբերող արտադրված և (կամ) վաճառվող սերմերին և տոհմային նյութին շնորհելն արտոնագրի տիրոջ ու սելեկցիոների իրավունքների խախտում է:

Հոդված 1159. Սելեկցիոն նվաճման արտոնագրի տիրոջ իրավունքները

Սելեկցիոն նվաճման օգտագործման բացառիկ իրավունքը, «Սելեկցիոն նվաճումների պաշտպանության մասին *և «Բույսի սորտերի պահպանության մասին*» Հայաստանի Հանրապետության ~~օրենքով~~ *օրենքներով* նախատեսված սահմաններում, պատկանում է սելեկցիոն նվաճման արտոնագրի տիրոջը:

Հոդված 1161. Սելեկցիոն նվաճման նկատմամբ արտոնագրի գործողության ժամկետը

Սելեկցիոն նվաճման նկատմամբ արտոնագրի գործողությունն սկսվում է պահպանվող սելեկցիոն նվաճումների պետական գրանցամատյանում նվաճումը գրանցելու և արտոնագիրը տալու օրվանից: Արտոնագրի գործողության ժամկետը սահմանվում է «Սելեկցիոն նվաճումների պաշտպանության մասին *և «Բույսի սորտերի պահպանության մասին*» Հայաստանի Հանրապետության ~~օրենքով~~ *օրենքներով*: